# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2026 թվականի N 1205 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 1018-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 24-ի «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման և հաստատման կարգը հաստատելու մասին» N 1018-Ն որոշման հավելվածի՝

1) 10-րդ կետը «ռեսուրսի» բառից հետո լրացնել «կամ ոլորտային մասնագետների (փորձագետների)» բառերով.

2) 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1.-ին կետ՝

«17.1. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման աշխատանքների ոլորտային մասնագետներ (փորձագետներ) են համարվում նորմատիվատեխնիկական փաստաթղթի կարգավորման ոլորտում համապատասխան մասնագիտական գիտելիքներ, գործնական փորձառություն կամ գիտական ներուժ ունեցող ֆիզիկական անձինք: Ոլորտային մասնագետների (փորձագետների)

մասնագիտական կարողությունները հավաստվում են կրթությունը, որակավորումը, գիտական աստիճանը կամ կոչումը, աշխատանքային փորձը, նախկինում իրականացված աշխատանքները, մասնագիտական հրապարակումները, վերապատրաստումները կամ համապատասխան ոլորտում գործունեությունը հաստատող փաստաթղթերով:».

3) 19-րդ կետից հանել «՝ կազմակերպությունների» բառը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ